



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Էքսկուրսիաները և արտադասարանական աշխատանքները որպես Էկո-
դաստիարակություն

ԱՌԱՐԿԱ՝ Կենսաբանություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Թերմինե Հովհաննիսյան

ՄԱՐԶ՝ Շիրակի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Շիրակի մարզ «Գ.Լուսակերտի միջնակարգ
դպրոց» ՊՈԱԿ

Բովադակություն

1.Ներածություն.....	3
Գլուխ 1 Ի՞նչ է էկոլոգիական դաստիարակությունը:.....	4
1.2 Էկոլոգիական դաստիարակության նպատակները և խնդիրները:.....	5
Գլուխ 2 .Էկոլոգիայի հիմնախնդիրները:.....	6
2.1.Օդի աղտոտման պատճառները:.....	6
2.2.Մարդածին աղտոտում:.....	7
2.3.Կենսաբանական աշխարհի պահպանում.....	8
2.4.Բուսական աշխարհի պահպանում.....	8
2.5.Զրային ռեսուրսների դերը,նշանակությունը և էկոլոգիական խնդիրները:.....	9
Գլուխ 3.Էկոլոգիական գործընթացի կազմակերպում և էկոլոգիական կրթություն:.....	10
4.Էկոլոգիական դաստիարակությունը դարոցում:.....	11
4.1.Էքսկուրսիաները և արտադասարանական պարապմունքները:.....	13
5.Քննարկումներ՝ ուսուցիչ և աշակերտ.....	15
6.Եզրակացություն.....	16
7.Օգտագործված գրականության ցանկ.....	17

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առջև: Դպրոցն ու ուսուցիչը միշտ գործել են որոշակի ժամանակի և միջավայրի մեջ: Հենց այս հանգամանքն էլ ենթադրում է, որ ուսուցիչը ժամանակին համաքայլ ընթանելու խնդիր ունի:

Առարկայի մասին որոշակի նյութ հաղորդելը և դրա յուրացման աստճանը ստուգելը չի բավարարում կյանքի պահանջներին:

Ուսուցչի առջև խնդիր է դրված ձևավորել գործնական գիտելիքներով, կարողություններով, արժեքներով օժտված անհատներ: Այս նպատակին հասնելու համար խիստ անհրաժեշտ են ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով այսօր ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցները բազմազան են: Կենսաբանության դասավանդման ընթացքում ուշադրության կենտրոնում են պահում հատկապես էկոլոգիական խնդիրների վրա:

Բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը մարդկային հասարակության կարևոր հիմնախնդիրներից են: Երկիր մոլորակն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Էկոլոգիական դաստիարակությունը և էկոլոգիական կրթությունը ներկայիս գոյապահպանման պահանջն է: Այսօր կարևորելով էկոլոգիական կրթությունը կատարում են տարբեր հետազոտություններ: Էկոլոգիական կրթությունը ներառված է կրթական տարբեր ոլորտներում և ունի նպատակ՝ ձևավորել էկոլոգիական գիտակցություն: Դպրոցներում սովորողի էկոլոգիական դաստիարակության խնդրում շատ կարևոր են արտադասարանական պարապմունքները և էքսկուրսիաների կազմակերպումը, որի ժամանակ աշակերտի մոտ զարգանում է սեր բնության հանդեպ, հետաքրքրություն դեպի բնությունը, ինչպես նաև ցանկություն մասնակցելու բնապահպանական որոշակի խնդիրների լուծմանը: Էկոլոգիական դաստիարակությունը պետք է լինի շարունակական, քանի որ էկոլոգիական խնդիրները բազմաթիվ են, որոնք պահանջում են հրատապ լուծում: Այսօր էկոլոգիական հիմնախնդիրները բազմաթիվ են, որոնք պահանջում են հրատապ լուծում: Այսօր էկոլոգիական հիմնախնդիրները նաև դարձել են համամոլորակային: Յուրաքանչյուրիս պարտքն է պահպանել բնությունը, վերականգնել խաթարված էկոլոգիական համակարգերը: Անձի էկոլոգիական կրթությունը, մշակույթը, որը բխում է մարդ-հասարակություն, բնություն փոխազդեցության պահանջներից:

ԳԼՈՒԽ 1. Ի՞նչ է էկոլոգիական կրթությունը

Մեզանից յուրաքանչյուրս շատ բան կարող ենք անել բնության պաշտպանության հարցում: Ամեն մեկիս քաղաքացիական պարտքն է պահպանել բնությունը, վերականգնել խաթարված էկոհամակարգերը: Ժամանակակից մարդուն անհրաժեշտ էկոլոգիական գիտելիքների մեծ պաշար, ճիշտ վերաբերմունք շրջապատող միջավայրին՝ բույսերին կենդանիներին, թռչուններին, որպեսզի կարողանա մասնակցի բնապահպանական ցանկացած խնդրի լուծմանը:

Սովորողի էկոլոգիական կրթությունը էկոլոգիական գիտելիքների և հմտությունների համակարգ է, որը միտված է աշակերտների մեջ շրջապատող բնական աշխարհի, երևույթների, օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների, էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Աշակերտները պետք է գիտակցեն, որ մեր հայրենիքը մեր մոլորակի մի փոքրիկ մասնիկ է և ունի բոլորիս օգնության կարիքը: Անհրաժեշտ է աշակերտների մեջ սերմանել նախաձեռնություններ, նրանք սեփական նախաձեռնությամբ և միջոցառումներով պիտի պաշտպանեն մեր այսօրվա վտազնված գեղեցիկ բնությունը: Աշակերտի էկոլոգիական վարքագծի ձևավորումը՝ սովորաողի մետ մշակվում է որոշակի վարքագիծ բնության հետ փոխազդեցության ընթացքում:

Էկոլոգիական դաստիարակություն տալու համար նախ ինքներս պիտի զինվենք էկոլոգիական տարրական գիտելիքներով ու էկոլոգիական տարրական գիտելիքներով ու էկոլոգիական մտածողությամբ, ապա փոխանցենք մեր կրտսեր սերունդներին: Իսկ այդ դաստիարակությունը հաջորդ կազմակերպելու համար պետք է հստակեցնենք նխատակներն ու խնդիրները:

1.2. Էկոլոգիական դաստիարակության նպատակներն ու խնդիրները

Շատ կարևոր է աշակերտի մեջ ձևավորել էկոլոգիական դաստիարակության նպատակները՝ նախ՝

ա) Ապահովել մարդու և հասքարակության անընդմեջ համալիր, միասնական

էկոլոգիական գիտելիքների մատուցումը:

բ) Նպաստել էկոլոգիական դաստիարակության և կուլտուրայի ձևավորմանը:

գ) Հասարակության և շրջակա միջավայրի փոխներգործությունների

միասնությանը: Ապահովել դրանց ձևավորումը:

Էկոլոգիապես դաստիարակելու համար կան նաև որոշակի խնդիրներ.

1. Էկոլոգիական գիտելիքների հաղորդման իրավունքի ապահովում և պաշտպանում:
2. Ազգաբնակչության էկոլոգիական ուսուցման, դաստիարակման և էկոլոգիական կուլտուրայի մշակման, ձևավորման և զարգացման իրավական սոցիալ տնտեսական, հոգեբանական երաշխիքների ապահովումը:
3. Գոյություն ունեցող տեղեկատվական ու կրթական կառույցների համակարգում առաջացած խնդիրների կենսագործման ապահովումը:

ԳԼՈՒԽ2. Էկոլոգիայի հիմնախնդիրները

Էկոլոգիան որպես գիտություն ուսումնասիրում է թե անընդհատ փոփոխվող պայմաններում ինչպես է գոյատևում բույսերի, կենդանիների, սնկերի, բակտերիաների, տարբեր տեսակի օրգանիզմներն երկրի վրա, ինչպե՞ս են դրանք կապված շրջակա միջավայրի և միմյանց հետ, ի՞նչն է ապահովում կյանքի կայունությունը միջավայրի պայմանների որոշակի փոփոխությունների դիրքերիում:

Ժամանակակից էկոլոգիայում բազմաթիվ խնդիրներ կան՝ կախված կլիմայի փոփոխության և մարդածին գործոնի, հատկապես մարդկանց թվաքանակի ավելացման հետ:

Քննարկենք առանձին-առանձին:

2.1. Օդի աղտոտման պատճառները

Մեր մոլորակի վրա կյանքի անհրաժեշտ կլիման ապահովում են արևի ճառագայթները և երկրի մթնոլորտը: Բայց առանձին վայրերում՝ հատկապես արդյունաբերական քաղաքներում օդ արտանետվում է ոչ պիտանի, վնասակար նյութեր, վնասակար նյութեր, թունավոր գազեր և այլն: Օդի աղտոտման հետևանքներից են ջերմոցային էֆեկտը, թթվային անձրևները, ծխածածկույթը: Մթնոլորտ արտանետված գազերը, փոշին, մուրը, ջրային գոլորշիների վրա առաջացնում են կայուն համակարգեր, միացություններ, հեղձուցիչ մառախուղ, որը մեծ քաղաքների համար չարիք է: Դրված է էկոլոգիապես մաքուր, անթերի, անթափոն արտադրության հիմնախնդիրները: Այդ նպատակներով գործարաններում տեղադրվում են գտիչներ, մեքենաների շարժիչներում՝ կատալիզատորներ՝ այրումը լրիվ կատարելու համար և այլն:

Միջազգային հանրության հիմնական պայքարն ընթանում է օզոնը քայքայող նյութերի կիրառման դեմ: Օզոնային շերտի պահպանումը համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներից է:

2.2. Մարդածին աղտոտում

Մարդ իր գործունեությամբ տարիների ընթացքում ազդել է բնության վրա, խախտել բնապահպանական հավասարակշռությունը, աղտոտել է միջավայրը, դարձրել է պակաս նպաստավոր, իսկ որոշ դեպքերում էլ մարդկանց և կենդանի օրգանիքզմների համար վտանգավոր: Աղտոտման ամենատարածված աղբյուրներն են արդյունաբերությունը, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, հանքարդյունաբերական ձեռնարկությունները: Դրանք ավերում են բնական համակերպությունները, արդյունաբերական և հանքերից առաջացած թափոնները կուտակվում են բնության մեջ ամբողջովին փոխելով բնական միջավայրը: Բնական միջավայրում աղտոտման տեսակները 2 են՝ մարդածին և բնական:

Մարդածին աղտոտման մեջ տարբերում ենք 3 խմբեր՝ կենսաբանական, մեխանիկական և քիմիական: Կենսաբանական աղտոտման պատճառներն են՝ աղտածին բակտերիաները, սնկերը, կապտականաչ ջրհմուռները և մարդու համար վտանգավոր նյութերը:

Մեխանիկական աղտոտման պատճառներն են՝ փոշին, աէրոզոլ և կենցաղային թափոնները: Քիմիական աղտոտման պատճառներն են՝ բոլոր տեսակի քիմիական միացությունները, նյութերը թթուները, հիմքերը, ալաստմասաները, CO₂, SO₂ և այլն: Բնական աղտոտման պատճառներն են՝ հրաբուխները, երկրաշարժերը, հրդեհները, ջրհեղեղները և այլն բնական աղետները:

2.3. Կենդանական աշխարհի պահպանումը

Կենդանական աշխարհի բազմազանության պահպանությունը էկոլոգիայի կարևոր խնդիրներից է: Ներկայացնենք երկրի երեսից անհետացած կենդանակերպերի մոտավոր քանակը.

83 տեսակ կաթնասուն

28 տեսակ սողուններ

23 տեսակ ձկներ

130 տեսակ թռչուններ

Կենդանիների պահպանության համար նախ անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան միջոցառումներ: Իսկ այդ միջոցառումներին կազմակերպված բնույթ տալու և արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նախ բացահայտել այն բուսատեսակները և կենդանատեսակները, որոնք ոչնչացման եզրին են: Կազմեցին «Կարմիր գրքեր» որտեղ գրանցեցին հազվադեպ հանդիպող և ոչնչացման եզրին գտնվող կենդանիներին: Բնապահպանական նպատակներով ստեղծվեցին արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր:

2.4. Բուսական աշխարհի պահպանումը

Բուսական աշխարհի պահպանումը էկոլոգիայի կարևոր խնդիրներից է: Երկրագնդի բուսական ռեսուրսների կազմում մեծ տեղ են գրավում անտառների պահպանումը: Երկրագնդի կենդանի բուսազանգվածը կազմում է 1770մլրդ տոննա, որից 1640մլրդ տոննան կամ 90%-ը բաժին է ընկնում անտառներին:

Աշխարհի վրա տեղի է ունենում անտառների անխնա շահագործում, անտառի ոչնչացում: Անտառային տարածքները պակասում են նաև անտառային հրդեհների արդյունքում:

Հրդեհներն հանգցնելու համար երբեմն կարիք է լինում միջազգային օգնություն: Իսկ հրդեհների պատճառները ևս կարող են լինել մարդկային և բնական:

Իսկ անտառապատ տարածքի կրճատման հետևանքով մթնոլորտում կրճատվում է O_2 –ի քանակը, և ավելանում է CO_2 -ի քանակը, ուժեղանում է հողերի էրոզիան, անապատացումը, քայքայվում է էկոհամակարգը, ավելանում են երկրաշարժերը:

2.5.Զրային ռեսուրսների դերը, նշանակությունը և էկոլոգիական խնդիրները

Ջուրը կյանքի աղբյուրն է, ջրի պաշարները շատ սահմանափակ են: Զրային ռեսուրսների պահպանության կարևոր ուղղություն է ջրի խնայողաբար օգտագործումը: Հատկապես մեծ նշանակություն ունի գյուղատնտեսական ոռոգման, քաղաքների ու գյուղերի ջրամատակարարման համար: Այսօր մարդկության առջև ծառայած նաև խմելու ջրի պահպանության խնդիրը: Կենցաղային-տնտեսական նպատակով 1 մարդու հաշվով տատանվում է 300-700լ ջուր 1օրում, դա խոսում է այն մասին, որ ջրի խնայողությունը սուր սոցիալական տնտեսական շուրջ հիմնախնդիր է 1 բաժակ ջուրը ևս հաշվարկի մեջ է:

ԳԼՈՒԽ 3. Էկոլոգիական գործընթացի կազմակերպում և Էկոլոգիական կրթության համակարգը

Էկոլոգիական կրթությունը ՀՀ միասնական կրթության համակարգի բաղադրիչ է:

Պետական կրթական չափորոշիչների, կրթական հաջողությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, դասընթացների, ուսումնական հաստատությունների կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջությունն է:

Էկոլոգիական կրթությունը պարտադիր է: Այն ուղղված է շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծմանը:

Էկոլոգիական կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները.

1. Նախադպրոցական էկոլոգիական կրթություն և դաստիարակություն:
2. Միջնակարգ էկոլոգիական կրթություն:
3. Միջին մասնագիտական էկոլոգիական կրթություն:
4. Բարձրագույն մասնագիտական էկոլոգիական կրթություն:
5. Հետբուհական էկոլոգիական կրթություն:
6. Հասարակության լայն խավերի էկոլոգիական կրթություն և դաստիարակություն:

4. Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում

Էկոլոգիական դաստիարակությունը դպրոցում կազմակերպվում է ակտիվ ուսուցման մեթոդներով՝ հատկապես տեսական և գործնական պարապմունքներով: Ուսուցման ձևերից են արտադասարանական պարապմունքները, միջոցառումները, արշավները, էքսկուրսիաները, բուսաբանական և կենդանաբանական այգիները, արգելավայրերն ու արգելոցները:

Տարրական դասարաններում երեխաները էկոլոգիական գիտելիքներ ստանում են շրջակա միջավայր, մայրենի լեզվի դասերի ընթացքում: Ավելի բարձր դասարաններում բնագիտությունից, իսկ 7-րդ դասարանից սկսած կենսաբանությունից, քիմիայից, ֆիզիկայից և աշխարհագրությունից: Ցածր դասարաններում երեխաները մշակում են սենյակային բույսեր, սովորում են խնամել բույսերին: Նրանց ջրում են, ազատում մոլախտտերից, պարարտացնում, փխրեցնում հողը: Առաջին անգամ երեխան տեսնում է իր մշակած բույսի աճը, զարգացումը, առաջին ծաղիկների բացվելը, պտուղների զարգացումը և հասունացումը, սկսում է սիրել և պահպանել բնությունը: Ձևավորվում է սեր գեղեցիկի նկատմամբ, ցուցաբերում հոգատար վերաբերմունք իր և ուրիշի աշխատանքի նկատմամբ: Գարնանը X և XI դասարանների աշակերտների հետ կազմակերպեցինք ծառատունկ՝ դպրոցի բակում: Մասնակցում էին նաև ուսուցիչները և ծնողները: Կարգախոսն էր բարեխիղճ վերաբերմունք բնության նկատմամբ: Այնուհետև կազմակերպեցինք «Գրքի ստեղծումը» թեմայով տեսանյութի դիտում: Երեխաները տեսան, հասկացան թե ինչպես են փայտից ստանում թուղթ, թղթից՝ գիրք: Աշակերտները ավելի շատ բան իմացան բույսերի կարևորության և նշանակության մասին: Որոշեցին, որ իրենց աշխատանքը և ուշադրությունը այգու նկատմամբ պետք է լինի շարունակական: Սկսեցին հաճախակի ջրել և խնամել իրենց տնկած ծառերը: Այդ ընթացքում ծանոթացան բակում աճող մյուս բույսերի, ծառերի, թփերի հետ: Դրանց մեջ կային շատ օգտակար բույսեր, որոնք մենք օգտագործում ենք որպես դեղաբույսեր: Կային բույսեր որոնք օգտագործվում են որպես սնունդ: Աշակերտները բակում նաև հետաքրքրվեցին նաև գեղեցիկ թռչուններով և թիթեռներով, սկսեցին ավելի սիրել բնությունը: Իսկ արդեն աշնանը ինքնական մաքրեցին բակը տերևներից և չոր ձյուղերից: Իսկ աշխատանքներից հետո այգին մաքուր էր ու բարեկարգ: Երեխաների կատարած աշխատանքը մեծ ուրախություն պատճառեց ուսուցիչներին, ծնողներին, ինչպես նաև ցածր դասարանի աշակերտներին, որոնք ևս ցանկություն հայտնեցին մասնակցել այդ աշխատանքներին: Իսկ արդեն հաջորդ օրը մտածեցին ինչպես

վարվել հավաքված աղբի և բույսերի մնացորդների հետ: Սկզբից տեսակավորեցին աղբը առանձին պարկերի մեջ լցնելով թուղթ, պլաստմասաներ, տոպրակներ, իսկ մյուս պարկերի մեջ՝ բույսերի մնացորդները: Աշխատանքի փորձեցինք վերագրել գործնականի՝ պատի թերթի վրա անդրադառնալով շրջակա միջավայրի հարցերին:

1. Անհրաժեշտ է իմանալ շրջակա միջավայրի նկատմամբ մեր պարտականությունները:
2. Աղբի բնապահպանական հիմնախնդիրը լուրջ խնդիր է և կարող ենք նպաստել յուրաքանչյուրս:
3. Կրճատենք աղբի քանակը և յուրաքանչյուրս մի իր դեմ նետելուց առաջ մտածենք:
4. Մասնակցենք և պահանջենք էկոլոգիական միջոցառումներին:
5. Փորձենք լուծել մեր խնդիրները ինքնուրույն:

Աշխատանքի ավարտից հետո աշակերտները որոշեցին, որ պետք է նվազեցնեն պլաստիկ շշերի, պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը և դեմ նետումը:

Աշխատանքը շատ նպատակային էր, նրանք մեծ բավականություն ստացան իրենց կատարած աշխատանքից, իսկ ցածր դասարանի աշակերտները օրինակ կդառնան մյուսների համար:

4.1. Էքսկուրսիաներ և արտադասարանական պարապմունքներ

Որոշեցինք 11-րդ դասարանցիների հետ էքսկուրսի կատարել դեպի անտառ: Կազմեցինք հարցաշար և կատարեցինք հարցում: Մեր զբոսանքի ժամանակ անցկացվող զրույցները երեխաների մոտ ձևավորեցին որոշակի վերաբերմունք բույսերի և կենդանիների, ինչպես նաև շրջակա միջավայրի նկատմամբ:

Հարցաշարը պահանջում էր անկեղծ պատասխաններ.

1. Արդյո՞ք մեր շրջապատի բույսերն ու կենդանիներն ունեն պաշտպանության կարիք:
2. Կարևո՞ր է արդյուք էկոլոգիական դաստիարակությունը երեխաների համար:
3. Կարևո՞ր է անտառի պահպանումը:
4. Արդյո՞ք յուրաքանչյուր տեղեկացված ենք էկոլոգիական հիմնախնդիրներին:
5. Ի՞նչ վնաս կարող են հասցնել անտառային հրդեհները և անտառահատումները:
6. Ի՞նչ կառաջարկեք անտառի պահպանության համար:

- I. -Հարցիս բոլորի պատասխանը նույնն էր՝ «այո ունեն պաշտպանության կարիք յուրաքանչյուր կենդանի օրգանիզմներ և բույսեր»:
- II. -հարցին ևս «այո» բայց առանց հիմնավորման թե ինչու՞:
- III. -Միանշանակ այո՞, անտառների պահպանությունը կարևոր է մարդու համար:
- IV. -պատասխանեցին «Ոչ» ոչ բոլորն են տեղեկացված և ոչ լիարժեք:
- V. -Ոչ բոլորն էին համոզված իրենց պատասխանի ճիշտ լինելուն, բայց միանշանակ գիտակցում են, որ այո՞ մեծ վնաս է և՛ անտառահատումները, և՛ հրդեհները:
- VI. -հարցին մի քանի աշակերտ առաջարկեց ուղղակի չկտրել ծառերը, չոչնչացնել կենդանիներին, մի մասն էլ մարդկանց էկոլոգիական մշակույթի խնդիրն էր քննարկում եթե բոլորս միասին գիտակցենք, որ բնությունը շատ կարևոր է մեր և մեր առողջության համար, պետք է պահպանել և խնամել:

Աշակերտների հետ զրույցեցինք նաև անտառի նշանակության համար և վերջապես ո՞րն է անտառի դերը: Գիտենք, որ Հայաստանը անտառներով աղքատ երկիր է: Ընդհանուր տարածքի 10%-ն է ծածկված անտառներով:

Կատարվող անխնա անտառահատումները բերեցին շատ կենդանիների, թռչունների ոչնչացմանը: Անտառները համարվում են երկրագնդի թոքերը, օդը հարստացնում են O_2 – ով, արտադրում են ֆիտենցիտներ, որոնք օդը մաքրում են օդը մաքրում են հիվանդաբեր բակտերիաներից: Անտառը նաև մարդկաց համար համարվում է ապրոստի միջոց, եկամտի աղբյուր՝ արժեքավոր փայտի և որոշ պտուղներ, հատապտղատու ծառեր: Դրա համար աշակերտը պետք է պահպանի և մասնակցի անտառապահպան միջոցառումներին, պետք է պայքարել անտառահատների դեմ: Օդի աղտոտվածությունը առաջանում է նյարդային, սիրտ-անոթային, շնչառական համակարգերի, տեսողական հիվանդություններ: Դրա համար էլ առողջարանները կառուցում են այն վայրերում, որտեղ անտառային տարածքը շատ է: Աշակերտներին շատ էր հետաքրքրել անտառային խնդիրները, նրանք որոշեցին, որ փայտի փոխարեն կարելի է օգտագործել վառելիքի այլ տեսակներ, իսկ օրվա վերջում նրանք խնամքով մաքրեցին այն տարածքը, որտեղ նստել էին, հավաքեցին աղբը և հեռացրեցին անտառից: Ջգուշորեն հանգրցին կրակը, որ չդառնա հրդեհի պատճառ: Երեխաների մոտ արդեն կար ձևավորված էկոլոգիական մշակույթ: Իսկ էքսկուրսիայից հետո նրանք նույն հարցաշարի հարցերին նորից պատասխանեցին.

- I. հարցին- միանշանակ բոլորը այո՞, ունեն և՛ բույսերը, և՛ կենդանիները պաշտպանության կարիք:
- II. հարցին- նույնպես պատասխանեցին այո, բայց արդեն նրանց կարծիքով էկոլոգիական կրթությունը անհրաժեշտ է երեխաների համար, որ նրանք ճիշտ վերաբերվեն անտառին և նրա բնակիչներին:
- III. հարցին- ևս «այո՞» անտառը և՛ հանգստի աղբյուր է, և՛ որպես ապրուստ:
- IV. –այո , և արդեն մեկնաբանեցին խնդիրները:
- V. –այո՞, հրդեհների պատճառով կարող են այրվել հարյուրավոր հեկտարներ անտառ, ծխի պատճառով աղտոտվել օդը՝ CO և CO_2 գազերով, ինչպես նաև անտառահատումների կփոխվի նյութերի շրջապտույտը:

Այսպիսով երեխաների մոտ սոցիալական հարցում անցկացնելուց հետո եկանք այն եզրակացության, որ նրանք ձեռք բերեցին բավարար քանակի գիտելիք շրջակա միջավայրի, անտառի կենսաբազմազանության մասին:

5. Բննարկումներ. Ուսուցիչ-աշակերտ

Հետաքրքիր ու շատ անհրաժեշտ էկոլոգիական դաստիարակության թեման մենք շարունակեցինք նաև ուսուցիչների հետ: Կազմեցինք 5 հարց.

1. Արդյո՞ք կարևոր է էկոլոգիական դաստիարակությունը աշակերտի համար:
Բոլոր ուսուցիչները պատասխանեցին «այո՛»:

2. Արդյո՞ք դուք տեղեկացված եք էկոլոգիական խնդիրներին:
Նորից բոլորը՝ այո

3. Դուք ձեզ համարում եք բնության նաբաժանելի մասնիկ:
Նորից՝այո:

4. Անտառի կենսաբազմազանության պահպանումը անհրաժե՞շտ եք համարում:
-Այո-

5. Ի՞նչ կառաջարկեք անտառի կենսաբազմազանության պահպանման համար:
Վերջին 5-րդ հարցին ուսուցիչներն առաջարկեցին, որ անտառների բարիքների օգտագործումը պետք է լինի պլանավորված, որը, կնպաստի անտառի և բնության պահպանությանը: Այսպիսով արտադասարանական պարապմունքները և էկոլոգիական կրթությունը աշակերտներին ընձեռնեց հնարավորություն բացահայտել սեփական հնարավորությունները, լինելով և՛ նախաձեռնող, և՛ ինքնուրույն, և՛ ստեղծագործող անձ՝ բնապահպանության գործում: Այդ պարապմունքները արդյունավետ են էկոլոգիական դաստիարակության համար:

Եզրակացություն

Արտադասարանական աշխատանքների և էքսկուրսիաների ժամանակ աշակերտները ձեռք բերեցին բավարար գիտելիքներ շրջակա միջավայրի, անտառի կենսաբազմազանության մասին: Սիրեցին բնությունը, իմացան անտառի դերի և նշանակության մասին: Գիտակցեցին բնապահպանական գործունեության անհրաժեշտությունը մեր ժամանակներում, որև համամարդկային հիմնախնդիր է: Ուսուցիչներն ևս կարևորեցին էկոլոգիական դաստիարակության անհրաժեշտությունը դպրոցում:

Ձեռք բերեցին փորձնական և գործնական գիտելիքներ, ճանաչեցին բնությունը: Այս գիտելիքները երեխաների մեջ զարգացնում են ինքնուրույն ստեղծագործելու ունակություններ, համադրելով ունեցած գիտելիքները, ձեռք բերած գործնական հետազոտություններին, և հայտնել ինքնուրույն կարծիք, կարողանալ ինքնուրույն ներկայացնել:

Եկանք այն եզրակացության, որ շատ կարևոր են էքսկուրսիաները, արշավները և արտադասարանական աշխատանքները՝ հատկապես էկոլոգիական դաստիարակության հարցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Բնօգտագործում և բնապահպանություն» 1999թ.
Ա. Գասպարյան
Թ. Մկրտչյան
Լ. Վալեսյան
2. «Կենսաբանություն 12» -2011թ.
Ա. Գևորգյան
Դ. Դանիլեյան
Գ. Սևոյան
3. «Շրջակա միջավայր և բնապահպանություն» - 2010թ.
Մելանյա Դավթյան
4. Համացանցից՝ ընդհանուր ակնարկ բնապահպանության կարևորությունը: